ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա, հեռ.(ֆաքս)՝ 011 90 00 02

№ _____

«23» 01 _____ 2017 թ.

«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ի նախագահ, «Հետք» թերթի խմբագիր Էդիկ Բաղդասարյանին

ք.Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 18.01.2017թ. հարցմանը՝ հայտնում ենք, որ պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածի հատկանիշներով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում Շվեյցարիայի Համադաշնության և Պանամայի Հանրապետության տարածքներում դատավարական գործողություններ կատարելու նպատակով կազմվել են քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդություններ և ուղարկվել այդ երկրների իրավասու մարմիններին:

11.01.2017թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ստացվել է Շվեյցարիայի Համադաշնության Արդարադատության և ոստիկանության դաշնային դեպարտամենտի գրությունն այն մասին, որ դատական միջնորդությունը չեն կարող բավարարել:

Իսկ Պանամայի Հանրապետություն ուղարկված միջնորդության վերաբերյալ մինչ օրս որևէ տեղեկություն չի ստացվել, չնայած որ մեր կողմից իրավական օգնություն հայցելուց անցել է շուրջ վեց ամիս:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
լրատվական ծառայություն